

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան

18 հունվարի 2021թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան | 8. Լիաննա Գալստյան |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 9. Կարեն Գասպարյան |
| 3. Աննա Կարախանյան | 10. Կոյա Հովհաննիսյան |
| 4. Արամ Վերդյան | 11. Միսակ Խաչատրյան |
| 5. Արման Ներսիսյան | 12. Միրանուշ Վարդանյան |
| 6. Գրիգորի Սադյան | 13. Քրիստինա Հակոբյան |
| 7. Իգոր Մկրտումյան | 14. Քրիստինե Գյոնջյան |

Նիստին ներկա էին նաև կազմակերպության անդամներ՝ Նարինե Դերձակյանը, Վեսմիրա Հարությունյանը, Անի Սահակյանը:

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Քրիստինա Հակոբյանը:

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության մի շարք անդամների «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնելու մասին:
2. Այլ հարցեր:

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության մի շարք անդամների «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնելու մասին:

Նիստի մասնակիցները տեղեկացվեցին, որ թեև կազմակերպության կողմից տարբեր ժամանակահատվածներում ուղարկված հիշեցումների, կազմակերպության 52 անդամ չեն վճարել 2020 թվականի անդամավճարը: Առաջարկվեց դադարեցնել անդամավճարը չվճարած անձանց անդամակցությունը կազմակերպությանը: Հարցի քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը միաձայն որոշեց՝

Որոշում՝ 2020 թվականի անդամավճարը չվճարելու համար «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության մի շարք անդամների (անձանց ցանկը կցվում է):

2. Այլ հարցեր:

Պարոն Արման Ներսիսյանը ներկաներին տեղեկացրեց, որ կազմակերպության անդամագրվելու խնդրանքով կազմակերպությանն են դիմել 3 անձ: Այդ անձանց վերաբերյալ

տեղեկություններ ներկայացնելուց հետո առաջարկություն հնչեց բավարարել ստացված դիմումները: Առաջարկությունը դրվեց քվեարկության և միաձայն ընդունվեց:

Որոշում՝ *Բավարարել կազմակերպության անդամ դառնալու ցանկություն հայտնած 3 անձանց դիմումները (անձանց ցանկը կցվում է) և ընդունել նրանց որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ:*

Մինչ խորհրդի նիստն ավարտված հայտարարելը խորհրդի անդամները աշխատանքային կարգով մտքեր փոխանակեցին ռեգիստրարների հավատարմագրման պայմաններում փոփոխություններ կատարելու նպատակահարմարության վերաբերյալ:

Նիստի նախագահող՝

Նիստի քարտուղար՝



Իգոր Մկրտումյան

Քրիստինա Հակոբյան